ՆՈՐ ՍԵՐՆԴԻ ԹՈՇԱԿԱՌՈՒՆԵՐԸ

Նանե Մանուկյան

ՆՈՐ ՍԵՐՆԴԻ ԹՈՇԱԿԱՌՈՒՆԵՐԸ

Կուտակային կենսաթոշակային համակարգի քրոնիկոնը

ԵՐԵՎԱՆ
2024

Նանե Մանուկյան

ՆՈՐ ՍԵՐՆԴԻ ԹՈՇԱԿԱՌՈՒՆԵՐԸ

Կուտակային կենսաթոշակային համակարգի քրոնիկոնը

ԵՐԵՎԱՆ
2024

ՀՏԴ 364.35(479.25)
ԳՄԴ 65.272.21
Մ 283

Մ 283 Մանուկյան Նանե
Նոր սերնդի թոշակառուները: Կուտակային կենսաթոշակային համակարգի քրոնիկոնը / Ն. Մանուկյան.- Եր.: Newmag, 2024.-212. էջ:

Կուտակային կենսաթոշակային համակարգի հայկական մոդելը ձևավորվեց, թրծվեց և կայացավ երկու տասնամյակ անընդմեջ: Միջազգային փորձի ուսումնասիրությունից մինչև հայկական մոդելի ձևավորում, օրենսդրական փաթեթի մշակումից մինչև բանակցություններ միջազգային համբավ ունեցող ֆոնդերի կառավարիչների հետ, հանրային ընդվզումից մինչև սահմանադրական ճգնաժամ. կենսաթոշակային մեծածավալ բարեփոխման ամբողջական քրոնիկոնն ամփոփված է մեկ գրքում: Երեք տասնյակից ավելի բացառիկ հարցազրույցներով հագեցած գիրքը ներկայացնում է չոր թվերից այն կողմ մնացած իրականությունը, փակ դռների հետևում կայացած բանակցությունները, մերժումների ու հաջողությունների իրարահաջորդ շրջափուլերը և շատ ավելին:

Կուտակային կենսաթոշակային համակարգի ստեղծման, գործարկման և զարգացման տարբեր փուլերում առանցքային ներդրում ունեցած գործիչները բացահայտում են ռեֆորմի հետնաբեմը, քննարկում համակարգի կենսունակությունն ապահովող գործոնները, գնահատում գրանցած արդյունքները և ուրվագծում ապագայի մտապատկերը:

ՀՏԴ 364.35(479.25)
ԳՄԴ 65.272.21

Գլխավոր գործընկեր՝
Ամունդի ԱԿԲԱ
amundi-acba.am

Amundi acba
ASSET MANAGEMENT

ISBN 978-9939-967-59-2

Նանե Մանուկյան, «Նոր սերնդի թոշակառուները» © 2024, «Նյու Մեգ» ՍՊԸ
Այս գրքի հրատարակության իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին:

Բովանդակություն

Գործընկերոջ կողմից 7
Հեղինակի կողմից 9

Մաս 1 Բարեփոխումների մեկնարկը

Գլուխ 1 «Թոշակը սրբություն է» 13
Գլուխ 2 «Եթե չսպանեն, ռեֆորմը լինելու է» 21
Գլուխ 3 Օրենսդրական կարգավորումներ՝ տնական մեղրի փոխարեն 32
Գլուխ 4 «Ոչ միայն պետությունը, այլև քաղաքացին» 42
Գլուխ 5 Էստոնական մոդելի հայացումը 53

Մաս 2 Ֆոնդերի կառավարիչների մուտքն ու առաջին հիմնախնդիրները

Գլուխ 6 Փնտրելով լավագույնների մեջ լավագույններին 63
Գլուխ 7 «Ամունդին» գալիս է Հայաստան 73
Գլուխ 8 Պարտադիր, բայց ոչ պարտադրված 84
Գլուխ 9 Սահմանադրական ճգնաժամը 99
Գլուխ 10 «Ծառի պտուղը տնկողի թոռն է ուտում» 109

Մաս 3 Կորպորատիվ մշակույթից՝ ֆինանսական համակարգ. «Ամունդի-Ակբայի» 10 տարին

Գլուխ 11 Ինչպես ձևավորվեց երազանքի թիմը 127
Գլուխ 12 Կորպորատիվ մշակույթ 139
Գլուխ 13 «Ամունդի-Ակբան»՝ խստապահանջ ներդրող. 149
Գլուխ 14 Մնուցելով պետության ֆինանսական համակարգը 162

Մաս 4 Ապագայի մտապատկերը

Գլուխ 15 Մեծ խաղացողները՝ փոքր և նախանձախնդիր երկրում 173
Գլուխ 16 Պատրաստվելով եկող տասնամյակին 183
Գլուխ 17 Նոր սերնդի թոշակառուները 193

Լուսանկարների հեղինակներ 204
Ծանոթագրություններ 205

Գործընկերոջ կողմից

Սիրելի ընթերցող,

2024 թվականին նշում ենք մեր գործունեության 10-րդ տարին. կարևոր փուլ՝ կենսաթոշակային բարեփոխումների շրջանակում կուտակային կենսաթոշակային ֆոնդերի գործունեության համար:

Օգտվելով կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման և զարգացման պատմությունը լույս ընծայելու պատեհությունից՝ մեր անկեղծ երախտագիտությունն ենք հայտնում համակարգի ներդրման և կայացման ակունքներում կանգնած բոլոր ստրատեգներին, գաղափարակիրներին և նվիրյալներին, որոնց աննկուն կամքի ու համառ ջանքի շնորհիվ նախագծվել, կյանքի է կոչվել, բարելավվել և պահպանվել է կենսաթոշակային ապահովության կուտակային համակարգը: Այդ մարդկանց անունները հյուսվել են համակարգի կայացման հաջողված պատմությանը:

Այս գիրքը դեռևս ձևավորման ընթացքում գտնվող հանրապետությունում մեծ նպատակներ ունենալու, լայնածավալ բարեփոխումներ իրականացնելու և դրանք սերնդեսերունդ փոխանցելու մասին է:

Մեծ գաղափարի մասին խոսելիս անհնար է չանդրադառնալ մեր բաժնետերերին ու թիմի անդամներին, որոնք գործունեությունը սկսելուց ի վեր դարձել են բարձր պրոֆեսիոնալիզմի վառ օրինակներ և մարդակենտրոն արժեհամակարգի

նվիրյալներ: 2014 թ. հունվարին «Ամունդի-Ակբայում» մենք 7-ն էինք, այսօր՝ 12-ը: Թիմը փոքրաթիվ է, սակայն մարդկանց մենք չենք հաշվում, այլ գնահատում ենք նրանց մասնագիտական կարողություններն ու նվիրվածությունը: Այսօր մեր պատկերացումներն ու անելիքներն առավել հստակ են:

Մենք շնորհակալ ենք համակարգի շահակիրներին՝ իրենց վստահության, առանձին արժեքավոր դիտարկումների համար, որոնք նկատի ենք առնում մեր գործունեության ընթացքում: Մեզնից յուրաքանչյուրը, հիմնվելով բաժնետիրական առաջադեմ փորձի, մասնագիտական և տեխնոլոգիական աջակցության վրա, լիարժեք գիտակցում է վստահության կարևորությունն ու անխոնջ աշխատում՝ վաղվա կայունությունն ապահովելու մղումով:

Առանձնահատուկ շնորհակալություն ենք հայտնում մեր երկարամյա գործընկերոջը՝ Newmag-ին: Խորապես շնորհակալ ենք գրքի հեղինակ Նանե Մանուկյանին՝ այս բարդ պատմությանը ծանոթանալու և ընթերցողին անաչառ կերպով ներկայացնելու համար: Հատուկ երախտագիտություն ենք հայտնում մեր թիմակից Զարինե Եղիազարյանին՝ գրքի ձևավորման գործում իր անգնահատելի ներդրման համար:

Սիրով՝
«Ամունդի-Ակբա» թիմ

Հեղինակի կողմից

«Նոր սերնդի թոշակառուներ» ձևակերպումն ի հայտ եկավ, երբ գիրքը գրելու ընթացքում մտովի տեղափոխվեցի հեռու թվացող ապագա, որտեղ ես լինելու եմ կուտակային կենսաթոշակային համակարգի լիարժեք շահակիր: Հետո հասկացա, որ նման մեծածավալ և հիմնարար բարեփոխման դեպքում մի քանի տասնամյակն իրականում այնքան էլ «հեռու թվացող ապագա» չէ: Կենսաթոշակային համակարգի ռեֆորմի քննարկումները սկսվել են, երբ ես նոր էի ծնվել: Առավել առարկայական են դարձել, երբ արդեն դպրոցական էի, իրագործման փուլ են մտել, երբ ուսանող էի: Այսօր համակարգը կենսունակ և կայացած է, ես էլ պատիվ ունեմ պատմել այդ բարդ, քարքարոտ, բայց և կենսական նշանակություն ունեցող ճանապարհի մասին:

Գրքում կգտնեք համակարգի գաղափարակիրների ձևակերպումներն ու մտքերը, որոնք երբեք չեն հանրայնացվել, տողատակում՝ անկեղծ հուզմունք և ոգևորություն: Բազմազավակ հայրեր լինում են, բայց այս համակարգը «բազմաթիվ հայրեր» ունեցող զավակ է: Նվիրյալների ապահով ձեռքերում ծնված և մեծացած համակարգն այսօր ամուր կանգնած է հայրենի հողին:

Համակարգի հայկական մոդելը միջազգային հարթակներում այսօր ներկայացնում են որպես հաջողության պատմություն, բայց վաղուց ապացուցված է, որ ամեն հաջողության հետևում ահռելի աշխատանք է ամբարված, սայթաքումներ

և դժվարություններ են թաքնված: Գրքում առանց ավելորդ դրամատիզմի ի մի են բերված համակարգի ստեղծման և կայացման գլխավոր շրջափուլերը: Ռեֆորմի գաղափարակիրներն անսքող հպարտությամբ են պատմում օրենքների մշակման, հանրության հետ հաղորդակցման, միջազգային գործընկերների հետ բանակցությունների մասին, ներկայացնում իրենց կերտած պատմության առանցքային դրվագները:

Այս գիրքը հարգանքի տուրք է ժամանակի երազողներին: Միաժամանակ այն պատմությունն առանց գունազարդման արձանագրելու փորձ է, անկողմնակալ խորհրդածում՝ ապագա փորձություններին ընդառաջ:

Շնորհակալ եմ բոլոր զրուցակիցներիս՝ իրենց համար չափազանց կարևոր այս պատմության մանրամասներն ինձ վստահելու համար: Շնորհակալ եմ «Ամունդի-Ակբայի» թիմին՝ պրոֆեսիոնալիզմի, ոգեշնչման և արդյունավետ գործակցության համար: Շնորհակալ եմ Newmag հրատարակչությանը՝ վստահության և անհնարինը հնարավոր դարձնող աջակցության համար:

Հաճելի ընթերցում:

ամբողջական գիրքն այստեղ է՝
Bookmark